ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ
ՎԱՆԱՁՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ
HELSINKI CITIZENS' ASSEMBLY
VANADZOR OFFICE

2001 Հայաստանի Հանրապետություն,
Վանաձոր Տիգրան Մեծի պողոտա 59
59 Tigran Metsi st.
Vanadzor, 2001, Republic of Armenia
Tel. (հեռ.) (374 322) 4 22 68
Fax (ֆաքս) (374 322) 4 12 36
E-mail: hcav@hcav.am

Ե/2015- 10.12/646
10.12.2015 թ.

ՀՀ գլխավոր դատախազ Գ. Կոստանյանին

Պատճենը՝ ՀՀ հատուկ քննչական ծառայության պետ
Վ. Շահինյանին

ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՂՈՐԴՈՒՄ

Հայտնում եմ Ձեզ այն մասին, որ ունեմ հիմնավոր կասկած այն մասին, որ 2015թ. դեկտեմբերի 6-ին ՀՀ սահմանադրության փոփոխությունների հանրաքվեի արդյունքները մի շարք տեղամասերում կեղծվել են:

Կասկածները վերաբերում են այն տեղամասերին, որոնցում մասնակցությունը բարձր է եղել հանրապետության ողջ տարածքում գրանցված մասնակցության ցուցանիշից:

Այսպես, թվով 450 տեղամասերում հանրաքվեի օրը գրանցվել է 50-60 տոկոս մասնակցություն, 368 տեղամասում 60-70 տոկոս և 297 տեղամասում 70-100 տոկոս մասնակցություն, ինչը մեզ մոտ հիմնավոր կասկած է առաջացնում առ այն, որ այն տեղամասերում, որտեղ քվեարկության մասնակիցների ակտիվության ցուցանիշը բարձր է եղել 60 տոկոսից, տեղի է ունեցել կամ լցոնում, կամ բացակա անձանց փոխարեն ընտրություն: Նշված տեղամասերի ցանկը կից ներկայացվում է Ձեր ուսումնասիրությանը:

Ելնելով վերը նշվածից և ղեկավարվելով Ձեր լիազորություններով, դիմում եմ Ձեզ համապատասխան միջոցներ ձեռնարկելու կից ներկայացված ցուցակնում նշված ընտրատեղամասերում լցոնումներ կամ բացակա անձանց փոխարեն քվեարկություն կատարելու փաստը պարզելու, հանցանք կատարած անձանց բացահայտելու և պատասխանատվության ենթարկելու ուղղությամբ:

Կից ներկայացվում է 50-60, 60-70 և 70-100 տոկոս մասնակցություն ունեցած տեղամասերի ցանկը էլեկտրոնային կրիչի միջոցով:

Հարգանքներով
կազմակերպության նախագահ՝ Արթուր Սաքունց

Կատ.՝ Անի Չատինյան
achatinyan@hcav.am
հեռ. 094042268